

ԱՂԵԱՏԱԽՆԱՄ ՇԼԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻՋԻ ՀԱՅՈՑ

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

40-րդ ՏԱՐԻՔ ԴՋԱՆԻ - 1930

16736

182

SOCIÉTÉ DE BIENFAISANCE
DES ARMÉNIENS DE PARIS
COMPTES RENDUS DE LA 40^È ANNÉE
EXERCICE 1930

361

Գ - 28

361

90-28 ՆԻՄ

ԱՂԲԱՏԱԿԻՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԻԶԻ ՀԱՅՈՑ

ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ

40-րդ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ - 1930

2884

9549

2010

SOCIÉTÉ DE BIENFAISANCE
DES ARMÉNIENS DE PARIS

COMPTES RENDUS DE LA 40^È ANNÉE

EXERCICE 1930



25875-Ա.Ղ.

4849-56

2002

1931 ՄԱՐՏ ՏԱՄԵԻ ԴՇ. ՕՐԸ ԱՂ-
ՔԱՏԱԽՆԱՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒ-
ԹԵԱՆ 1930 ՏԱՐՈՒՈՅ ԵՒ 40ՐԴ ՏԱՐԵ-
ՇՐՁԱՆԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԵՒ ՀԱՇՈՒԵՏԻՈՒ-
ԹԻԻՆԸ ԿԱՐԴԱՅՈՒԵԼՈՎ ՄԻԱԶԱՅՆՈՒ-
ԹԵԱՄԲ ԵՒ ԱՌԱՆՅ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆ
ՎԱԻԵՐԱՅՈՒԵՑԱՆ:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ 40 ԱՄԵԱՅ ԳՈՐ-
ԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԵՂԵ-
ԿԱԳԻՐ-ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԵ-
ԼՈՒ ՎՐԱՅ Է ԵՒ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ԲՈ-
ԼՈՐ ԱՆԴԱՄԵՆԵՐՈՒՆ ԶՐԻ ՊԻՏԻ ՂՐԿՈՒԻ
ՆՈՅՆԵՐԵՐ ԱՄՍՈՅ ԷՆԹԱՅԻՆ:

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ
ԱՂՔԱՏԱԽԱՄԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ
(40^{րդ} ՏԱՐԵՇՐՁԱՆ)



ԸՆԴՀԱՆՈՒՐ

Բարեգի չափոց Աղքատախը.

ՀԱՍՈՅԹ

նամ-Բարեգործական Ընկերու-

թիւնը պատիւը ունի ձեզ դըր-

կելու 1930 տարուոյ և իր 40րդ տարեշրջանի գործու-
նէութեան ամփոփ տեղեկագիրը, որու մասին կը փու-
թայ քանի մը բացատրութիւններ տալ:

Ինչպէս պիտի տեսնուի յարակից հաշուեկշիռէն,
1930 տարուան ընթացքին Աղքատախնամի ընդհանուր
հասոյթը եղած է 144,863 Ֆրանք և 20 սանթիմ: Այս
հասոյթին մաս կը կազմեն.—

Ֆր. սնմ.

ա. Տարեկան անդամավճարներու

մէկ մասը

50,837 —

բ. Ողբացեալ բարերար

Պօղոս Նուպարի նուէրը 25000

Այլ եւ այլ նուիրատու-

թիւններ 12680, 40

57680 40

գ. Տարեկան պարահանդէ-

սէն գոյացած զուտ հասոյթ

43024 —

դ. Կտրօն, տոկոս և Մար-

կոսեան կտակէ գոյացած 2648, 50

5468 50

ե. Առաքինութեան մըր-

ցանակներու համար եղած

նուիրատուութիւններ

8500 —

գ. Ս. Ծննդեան և Զատիկի օրերուն եկեղեցիի պնա- կէն զոյացած հասոյթ	Ֆր. մնծ. 1090 20
է. Կանխավճար պանծա- պահին կողմէ	12939 45

ԸՆԴՀԱՆՈՒՐ 1930 տարեշրջանին Աղքատա-
ԾԱԽՔ խնամի ընդհանուր ծախքերու
զուամարը եղած է 119863 Ֆրանք
և 20 սանթիմ, որ կը մանրամասնուի հետեւեալ կեր-
պով. —

ա. Տան, պանդոկի և կա- յանի վարձք	Ֆր. մնծ. 70316 93
բ. Գործաւորներու ճանա- պարհածախք	3000 —
գ. Սուբիա և այլ երկիր- ներ վերադարձողներու ճանապարհածախք	3000 —
դ. Տկարակազմ և կամ թոքախտաւորներու ճամ- բորդութեան կամ ապա- քինարաններու համար եղած մասնակի օգնու- թիւն(պաշտօնական յանձ- նարարութեանց վրայ)	10000 —
ե. Հաղուստեղէնի համար	800 —
զ. Առաքինութեան մըր- ցանակներու համար	8500 —

է. Փոքր դրամագլուխներ	Ֆր. մնծ. 4173 —
ը. Անմիջական օգնու- թիւն	3200 —
թ. Քարտուղարի թոշակ	7200 —
ժ. Գրասենեակի պիտոյք, տպագրութեան և թղթա- տարական այլ եւ ալ ծախքեր	4073 05
ժա. Գրասենեակի վարձք	3400 —
ժբ. Պօղոս Նուպարի ան- ուան ընկերութեանս յանձ- նուած զուամարը (պահ դըր- ուած 70/10 տոկոսով)	23000 —

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ընկերութեանս ներկայ տար-
ՏԱԳՆԱՊԸ ԵՒ ուան դործունէութիւնը խիստ
ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐ աւելցած է գործազրկութեան և
աշխատանքի տագնապի հե-
տեւանքով, բացը մնացած բազմաթիւ հայ գործաւոր-
ներու և ընտանեաց ղիմումներուն պատճառաւ:

Ինչպէս ձեր շատերուն յայտնի է, Բարիզի և շըր-
ջակայից կարգ մը գործարաններ, Յունվարէն սկսեալ
իրենց աշխատաւորները արձակեցին, որոնց մէջ դըժ-
բախտաբար բաւական թիւով Հայեր ալ կային:

Ընկերութիւնս գործազուրկներուն իրապէս օգտա-
կար հանդիսանալու մտօք, Բարիզի բոլոր բարեգոր-
ծական, բարեսիրական և հայրենակցական ինչպէս նաև

Հայ Տիկ. Միութեան, Կ. Խաչեքու, Հայ-Լուսաւորչական,
Հայ-Հոռվմէական և Հայ-Աւետարանական եկեղեցիներու
վարչութեանց կողմէ մը ուղղելով խորհրդակցութեան
համար զանոնք հրաւիրած էր Ընդհանուր ժողովի:

ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐՈՒ

ՕԳՆՈՒԹԵԱՆ

ՄԱՐՄԻՆ

Ներկայ տարուայ փետրե-
ռար երկուքի կիրակի ա-
ռաւոտուն, ի ներկայու-
թեան քսանէ աւելի միու-

թեանց պաշտօնական ներկայացուցիչներու, սոյն
ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Աղքատախնամի
պաշտօնատեղիին մէջ, և կարծիքի փոխանակութենէ,
թեր ու դէմ վիճաբանութիւններէ և բացատրութիւն-
ներէ վերջ, ներկաներու միաձայն քուէովը կազմուե-
ցաւ Գործազուրկներու թգնութեան Մարմին մը, բաղ-
կացած հետեւեալ անձնաւորութիւններէն. —

Տիարք՝

Եր. Յարութիւնեան՝ (Տրապիզոնի Հայրենակցական Միութիւն)
Առ. Չաքըրեան՝ (Թէքնիքական Միութիւն)
Լորեա Պուօյեան՝ (Տարօն-Տուրուքերանի Հայր. Միութիւն)
Վ. Գարսեան՝ (Արքայապետի Հայրենակցական Միութիւն)
Յովհ. Թէւեան՝ (Հաճրնի Հայրենակցական Միութիւն)
Գիւսակ Փափաղեան՝ (Ակնայ Հայրենակցական Միութիւն)
Տօքթ. Աւուսկէրտի Որդի՝ (Աղքատախնամ Ընկերութիւն)

Գործազուրկներու Օգնութեան Մարմինը արդէն
գործի ձեռնարկած է և վստահ ենք թէ պիտի արդա-
բացնէ իր վրայ դրուած յոյսերը:

(Սոյն տեղեկագիրը մամլոյ յանձնուած էր երբ
վերջին ընդհ. ժողովին՝ որ գումարուեցաւ Զատիկի

երկրորդ օրը եկեղեցւոյ խորհրդարանին մէջ, աւել ի
ուժեղ գործունէութեան մը պէտքը շեշտուելով, նա-
խապէս ընտրեալ մարմինն վրայ աւելցուեցան Հայ
Տիկնանց եւ Կարմիր Խաչի կողմէ Տիկնայք՝ Պօղոս Էս-
մէրեան, Լեւոն ձէվաֆիրճեան եւ Լեւոն Կիւմիւշկէր-
տան, եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմէ՝ Տիար Գ.
Սարաճեան եւ Բարեգործականի Բարիգի տեղական
մասնաձիւղին կողմէ՝ Տիար Վ. Թագուրեան: Ի պա-
հանջել հարկին գումարուելիք ընդհանուր ժողովոյ
ատենապետ ընտրուեցաւ նաեւ Տիկ. Զապէլ Արամ
ձէվաֆիրճեան:)

Սոյն մարմինը թէեւ Աղքատախնամի հովանա-
ւորութեան տակ կը գտնուի և սակայն անկէ բոլորո-
վին անկախ կերպով կը գործէ և պատասխանատու է
մի միայն զինքը ընտրող ընդհանուր ժողովին: Առ
այժմ օրական 400—450 ֆրանքի դրամական օգնու-
թիւն մը կ'ընէ և յաջողած է տաան և հինգ գործա-
զուրկներու աշխատանք գտնել և հողագործութեան
մէջ աշխատողներու համար պաշտօնական դիմումներ
կատարած ըլլալով կը յուսայ քիչ ատենէն զանոնք
ամէնքն ալ Ֆրանսայի հարաւային կողմերը զրկելով
անոնց զբաղում գտնել:

Սոյն մարմնի գործունէութեան մանրամասն հա-
մարտութիւնը և հաշուեկշիռը և այս առթիւ եղած
դրամական բոլոր նուիրատուութիւնները ինչպէս նաեւ
Աղքատախնամի Օժանդակ Օրիորդաց Միութեան չորս
տարուան գործունէութեան տեղեկագիրը պիտի երե-
ւան տարույս ընթացքին Աղքատախնամի 40ամեայ
գործունէութեան առթիւ հրատարակուելիք տեղեկա-
գիր-յիշատակարանին մէջ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻԲ

Սակայն այժմէն հաճելի
պարտք մըն է յայտնել

Օրիորդաց Միութեան ժրջան անդամութիւններուն մեր
խորին շնորհակալիքը իրենց անխոնջ աշխատու-
թեանց համար: Պարտականութիւն է նոյնպէս մեր
ամենախորին շնորհակալիքը յայտնել Գործադուրկ-
ներու Օգնութեան Մարմնի բոլոր անդամոց, որոնք
ամէն ջանք կը թափեն հայ աշխատաւորին ու մա-
նաւանդ հայ գործադուրկին վիճակը բարւոքելու հա-
մար:

Երախտագիտութեան հաճելի պարտք մըն ալ ու-
նինք մեր Միութեան անդամութիւնի և անդամոց և ի
մասնաւորի մեր պատուական դանձապահ Տիար
Ն. Կարազեանի, որու թանկագին օժանդակութիւ-
նը մեզի համար մեծապէս օգտակար եղաւ:

Պարտազանց պիտի ըլլայինք եթէ հոս չի յիշա-
տակէինք այն բարոյական ծառայութիւնը ևս զոր հայ
մամուլի մեծ մասը ընծայեց Աղքատախնամին, անոր
գործունէութեան և որոշումներուն առթիւ սիրալոծար
բանալով իր սիւնակները:

Աղքատախնամը պարտք կը զգայ իր շնորհակա-
լիքը յայտնել նաև ամէն անոնց, որոնք բարոյական
և նիւթական օժանդակութիւններով դիւրացուցին իր
գործունէութիւնը և կը յուսայ որ ասկէ վերջ ևս Բա-
րեղի և շրջակայի հայ հասարակութիւնը չպիտի խնա-
յէ իր օժանդակութիւնը բարեգործական ընկերութեան
մը որ 1890 թուականէն ի վեր, քառասուն տարի անընդ-
հատ, իր կարելիութեան սահմաններուն մէջ և մի-
ջավայրի պայմաններուն ներած չափով, ազգօգուտ
աշխատանք մը տարած ըլլալու գոհունակութիւնը
ունի:

ՄԵՆԷ ԱՆԴԱՐՁ
ՄԵԿՆՈՂՆԵՐ

Տարեշրջանի փակման առ-
թիւ Աղքատախնամի խո-
րազած ցաւով կ'արձանա-

զրէ մահը երկու բարերար ազգայիններու: Մին՝ Պօ-
ղոս Նուպար, ազգային բարերար և Ընկերութեանս բա-
րերար անդամ, միւսը՝ Աղքատախնամի Օժանդակ
Հայ Օրիորդաց Միութեան հիմնադիրներէն, Առաքի-
նութեան Մրցանակներու Յանձնաժողովին նախագահ
և Աղքատախնամի Կեդրոնական Վարչական Ժողովոյ
անդամ և ներհուն բանաստեղծ ողբացեալ Ռուբէն Որ-
բերեան:

Աղքատախնամը և Օրիորդաց Միութիւնը մեզմէ
անդարձ բաժնուող այս երկու պատուական բարե-
բարներու յուղարկաւորութեանց պաշտօնապէս մաս-
նակցելով կատարեցին իրենց յարգանքի և ցաւակ-
ցական պարտականութիւնը:

Ի դիմաց Բարեղի Աղքատախնամ ընկերութեան

Ատենադպիր
ՏՕԲԹ. Ա.Լ.Ա.Հ.Վ.ԲՏԻ ՈՐԴԻ

Ատենապետ
ՀՐԱՆԳՔԻՆ ԳԱԶԻՐՅԱՆ



1514

Պատրաստած գրամ	7306,	60	ԿՊԱՍՏՆԵՐ	96690,	15
ՏԱՐԵԿԱՆ ԱՄՍԱՎԱՐՆԵՐԷ	160,	»	Յուճվար	9232,	45
Յուճվար	120,	»	Փետրվար	10171,	05
Փետրվար	90,	»	Մարտ	9860,	90
Մարտ	270,	»	Ապրիլ	9481,	10
Ապրիլ	1000,	»	Մայիս	10084,	35
Մայիս	5065,	»	Յունիս	5534,	»
Յունիս	8419,	»	Յուլիս	7638,	95
Յուլիս	450,	»	Օգոստոս	6162,	40
Օգոստոս	1280,	»	Սեպտեմբեր	7003,	75
Սեպտեմբեր	6864,	»	Հոկտեմբեր	6659,	20
Հոկտեմբեր	3450,	»	Նոյեմբեր	5968,	85
Նոյեմբեր	3969,	»	Դեկտեմբեր	8493,	15
Դեկտեմբեր					
ՆՈՒՆԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՔ			Սուսարին, մրդ, բաշխում		
Պողոս Նուպար Փաշա	25000,	»	ԲՆԻՇ. ՆԱԽՔ		
Ջանադանք	12680,	40	Վարձք	3400,	»
			Թաշակ	7200,	»
Առաքինութեան մրցանակ			Այլ եւ այլ ծախք	1073,	05
Պարահանդէսի զուտ հատոյթ					
Ջանադան եկամուտներ՝ Մար-					
կոսեան կապի եւն.	3468,	55			
Ծնունդի եւ ջառի պնակներէ	1090,	20			
Գանձադատէն փոխառութիւն	12959,	45			
	144863,	20			

Գաղտնիություն՝ Ն. ԿԱՐԱԳԵԱՆ

153 *Булгану* 1931

ՀԱՅԱՍՏԱՆԻ Վ. ԱԼԹՈՒՆԵԱՆ

Imprimerie A-DER
ՏՊԱՐԱՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ
17, Rue Damesme
Tél. GOB. 19-78
PARIS (13)



Imprimerie A-DER

ՏՊԱՐԱՆ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

17, Rue Damesme

Tél. GOB. 19-78

PARIS (13)
